

**ՀՈԿՅԱՆՆԵՍ ՇԻՐԱԶԻ «ԱՍՏԾՈ ՂՆՈՒԽԳՈՐԾՈՑ»
ՊՈՆԵՄԻ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ**

Ն. 3. ԹԻՐԱԲՅԱՆ

Հայ մեծանուն բանաստեղծ Հ. Շիրազի խոր կենսագրացողությամբ և լեզվի շքեղ պատկերավորությամբ է պայմանավորված նրա ինքնատիպ ոճը: Իր բանաստեղծություններում, քնարական մանրաքանդակներում, փոքր ու մեծածավալ պոեմներում, յոթնասատու քառյակներում, առակներում Հ. Շիրազը նյութի հարուստ բովանդակությունը կերտել է համապատասխան արտահայտչաձևերով, որոնց բնորոշ են անսպասելի զուգորդումները, հայերենի ածանցման ու բառաբարդման միջոցներով սեփական-անհատական բազմաթիվ նորաստեղծ բառերի, մակդիրների քաջահմուտ կիրառումները: Այս ամենով Հ. Շիրազը դարձել է մեր լեզվաստեղծ մեծ հեղինակներից մեկը: Անշուշտ, նորակազմություններ կերտելիս Հ. Շիրազը լեզվաբանական ու բառակազմական խնդիրներ լուծելու հատուկ նպատակ չի ունեցել: Բայց մի բան որոշակի է. նա հրաշալիորեն տիրապետել է ոչ միայն չափածո պատկերավոր մտածողության գաղտնիքներին, այլև մեր լեզվի բառակերտման հնարավորություններին: Այսպես ենք ասում, որովհետև շիրազյան նորակազմություններն այնքան օրգանապես են ներդաշնակված բառական միջավայրին, բանաստեղծական տողին ու պատկերին, որ ասես հատուկ ստեղծվել են հենց այդ տեղում գործածվելու, այդ պատկերի բովանդակությունն ու հուզականությունը նպատակադրված ընդգծելու և առավել արտահայտիչ դարձնելու համար: Շիրազյան նորակազմությունները ավելի շատ գոյականներից ու այլ խոսքի մասերից բառաբարդման, քան ածանցման միջոցով կազմված նոր գոյականներ, բայեր կամ ածականներ են:

Իր բանաստեղծություններում ու պոեմներում Հ. Շիրազը հաճախ է դիմել աստվածաշնչյան թեմաներին և իրեն բնորոշ լեզվամտածողությամբ ստեղծել խոհափիլիսոփայական պոեմների մի ամբողջ շարք՝ «Բիբլիականներ» ընդհանուր խորագրով: Այս շարքում նա վերջնական վերամշակումով ընդգրկել է նաև իր լավագույն երկերից մեկը՝ «Աստծո զուխգործոցը» պոեմը:

Նյութի ընդհանրությամբ ու բովանդակությամբ, գեղագիտական ու փիլիսոփայական հարցադրումներով այս պոեմն իրականում հանրահայտ «Բիբլիականնի» յուրատեսակ շարունակությունն է: Սա էլ նրա պես խորն է ու իմաստալից՝ բնության գաղտնիքների ու անլուծելի առեղծվածների պատկերավոր բնորոշումներով, **Աստված - սատանա - մարդ - կին** հարաբերությունների նորովի բացահայտումներով: Անհատական մակդիրների, փոխաբերությունների, համեմատությունների, հակադրությունների, պարադոքսների, չափազանցությունների, աստիճանավորման ու պատկերավորման մյուս միջոցների ամբողջական համակարգը պոեմը դարձրել է արվեստի անկրկնելի գործ, հայ բանաստեղծական արվեստի բարձրագույն արտահայտություններից մեկը:

Պոեմում գործածված պատկերավորման միջոցների համակարգում, սակայն, գերակա դեր ունի մակդիրը, որը շիրազյան խոսքը դարձնում է առավել ներգործող ու տպավորիչ:

Ոճագիտական արդի գրականության մեջ ընդունված է մակդիրը համարել գեղարվեստական որոշիչ: Այսպես, Պ. Պողոսյանը մակդիրներն ըստ իրենց արտահայտչական, կիրառական ու գործառական առանձնահատկությունների՝ բաժանում է հետևյալ տեսակների՝ փոխաբերական և ոչ փոխաբերական, խոսքային ու լեզվական և գունային մակդիրներ¹: Իսկ Լ. Եզեկյանը մակդիրների առաջնային հատկանիշ է համարում փոխաբերական իմաստը, որով էլ նրանք տարբերվում են քերականական որոշիչից: «Բառի փոխաբերական իմաստը,- գրում է նա,- մակդիրը կերտող միակ ու հիմնական հատկանիշն է *ինչպես առարկաները, այնպես էլ գործողության հատկանիշները* գեղագիտորեն բնութագրելիս»² (ընդգծ. մերն է - Ն. Թ.):

Մրանց կողքին առկա են նաև այս կամ այն հեղինակի ստեղծած անհատական մակդիրները, որոնք հատուկ են միայն նրա սեփական լեզվամտածողությանը:

Ավելացնենք և այն, որ վերջերս գործողությունը բնութագրող բառերը նույնպես մակդիր համարելու միտում է նկատվում: Հենց այդպիսիք կան նաև շիրազյան արտահայտչամիջոցներում, որոնք մյուսների հետ միասին ծառայում են մեկ միասնական նպատակի՝ Աստծու գլուխգործոց մարդուն տալիս են բազմահատկանիշ բնութագիր: Մարդու նախասկիզբը, երկրային ու երկնային առնչությունները, բնության իրերն ու երևույթները ճանաչելու, իմաստավորելու և անձնավորելու հետ միասին մակդիրները համակողմանիորեն բացահայտում են նրա ներաշխարհը, հոգու նուրբ ու խոր ծալքերը: Մակդիրները պետք է դիտարկվեն ոչ թե համատեքստից կտրված ու մեկուսացված, այլ գեղարվեստական պատկերի բառային միջավայրում: Այդպիսով կերևան նրանց կշիռն ու արժեքը, ուղղակի և փոխաբերական իմաստներն ու ենթիմաստները:

... Բայց կինն այնքան էր **նրբակին ու հեզ,**
Այնքան **ամոթխած, նագելի ու վառ,**
Այնքան **մարմնաճոխ, մարմնափրփրադեզ,**
Այնքան էր կինը **չքնաղ ու վարար,**
Եվ ինքը Աստված այնքան էր հզոր,
Եվ կինը այնքան **մարմնամեղավոր,**
Այնքան էր կինը **հզոր ու անզոր,**
Ու **մարմնամագնիս, շամբուշ ու վարար,**
Որ քիչ էր մնում
Մի **վեհ** վայրկյանում
Աստծո հայացքից կինն հղիանար³:

Ընդգծված մակդիրների մեծ մասը Հ. Շիրազն ինքն է ստեղծել. դրանք անհատական են, դիպուկ ու ինքնատիպ, նրա տաղանդին ու պատկերավոր մտածողությանը բնորոշ: Դեռևս լիովին չբացահայտված ու չարժևորված օրինաչափություններով ստեղծված այդ մակդիրներն ու նորակերտ բառերը այնքան են յուրահատուկ, որ դժվարանում են դասակարգել պատկերավորման միջոցների հայտնի համակարգում: Իրենց անսովոր կառույցով դրանք մի քանի դարձույթների յուրօրինակ համադրություն են, որտեղ դժվար է նախապատվություն տալ մակդիրին կամ փոխաբերությանը, համեմատությանը կամ անձնավորմանը:

¹ Տե՛ս Պ. Մ. Պողոսյան, Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, գիրք 2, Եր., 1991, էջ 46:

² Լ. Կ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 335:

³ Հ. Շիրազ, Երկեր, հ. 2, Եր., 1982, էջ 58 (այստեղից հղումները այսուհետև կտրվեն տեքստում, կնշվի միայն էջը):

Սակայն Հ. Շիրազի ստեղծագործության մեջ, մանավանդ նրա պոեմներում, մակդիրները բազմաթիվ են ու բազմազան: «Աստծո գլուխգործոցը» պոեմում էլ դրանք այնպիսի պատկանելի քանակ են կազմում, որ բոլորը ներկայացնելն ու դիտարկելը գործնականում գրեթե անհնար է, ուստի առանձնացնենք ու տեսակավորենք առավել բնորոշները:

Փոխաբերական իմաստով մակդիրներ. *ամենամայր* կիրք, *անկայան* դարեր, *անդունդ* որկոր, *ամպ* հոնքեր, *անզույգ* նախանձ, *ամենագաղտնի* գաղտնիք, *անազեղ* վայրկյան, *աստղային շաղախ*, *աստվածագոռ* մռունչ, *աստվածախանդ* չար, *անբուն* աղոթք, *բազմերախ* վիշտ, *բյուրանյութ* շաղախ, *բյուրասարինք* հող, *դիվային* տիղմ, *կայծակող* գայրույթ, *կույս* մուսա, *հագարաբերան* վիշտ, *հագարասիրտ* խիղճ, *հագարապարերք* երկիր, *հարսնացած* դաշտեր, *հեզնախոհ* ժպիտ, *մեղսածնունդ* կռիվ, *մրսածման* լաստ, *մեղսալեռ* լեզու, *կայծակնաշողակ* աչքեր, *կույս* հեքիաթներ, *մարգարտագուրկ* փրփուր, *շրջմուխ* հուր, *շուշանաբույր* մարմին, *դաշույնված* աչք, *խոլական* խռովք, *դիվախոհ* ծաղր, *հում* աստղանյութ, *ծնման* ծարավ, *հրեշտակաշունչ* հուզում, *նորաբողբոջ* կուրծք, *մշտակույս* կաթ, *ռհմակենի* աշխարհ, *սրինք* ողկույզ, *վարդերախ* վարդ, *վայրենամիտ* սերունդ, *վայրենամռունչ* քարայր, *վեհերոտ* աչք, *վիշապավիհ* որկոր, *օջազալար* հասակ և այլն:

Բերված օրինակները, մակդիրների ընդհանուր փոխաբերական բնույթի լրացուցիչ հավաստումը լինելով, նաև դրանք կիրառող հեղինակի ոճի անհատական բնույթն են հիմնավորում: Իսկ դա կարևոր է նրա լեզվամտածողության յուրահատկությունների բացահայտման տեսակետից:

Անհատական մակդիրներ. *նուրբ* հառաչանք, *անսուր* հավատք, *չար* ծարավանք, *կանթեղված* մարդ, *բազմանենգ* հոգի, *անզույգ* նախանձ, *դիվախոս* հրաբուխ, *կաթնանուշ* բնություն, *նեկգար* լույս, *մարդակուլ* ձոր, *անմարմին* լույս, *մաքաղ* միտք, *բազմաբղետ* արարչություն, *խոլ* ազահություն, *ցուխ* սանդուղք, *լուսավոր* քառս, *սուրբ* ահ, *փրփրածին* Աստղիկ, *նշենի* սիրտ, *ամենակործան* մարդ, *զթոտ* մրմունջ, *մահակունք* վշտեր, *հագարաշունչ* հուշ, *դժպիհ* դարեր, *դժոխաշունչ* սատանա, *հագարասարինք* գիրք և այլն:

Պոեմում կան տարբեր խոսքի մասերով արտահայտված մակդիրներ, որոնց մեջ, ինչպես տեսնում ենք, գերակշռում են անհատական արտահայտվածները: Սակայն արանց կողքին առկա են նաև գոյականով ու դերբայով սակավաթիվ մակդիրներ, որոնք նույնպես հետաքրքրություն են ներկայացնում:

Գոյականական որոշյով արտահայտված մակդիրներ. *սպշանքի* աչք, *արցունքի* ծով, *դաշույն* կտուց, *երգի* նավ, *ծիծաղի* գետ, *ծով* դարեր, *ծով* սով, *ծով* կիրք, *կրքի* օվկիան, *հույսի* մրմունջ, *մայր* հոգի, *Մասիսի* առագաստ, *ցնորքի* լույս, *հույսի* կանթեղ, *ոսկի* հավատ, *կույս* հեքիաթներ, *հուր* մարմին և այլն:

Գերբայով արտահայտված մակդիրներ. *կանթեղված* մարդ, *կրակված* սիրտ, *բնած* խիղճ, *անապարաված* վերք, *զարթնող* խիղճ, *հալվող* ջահել, *հարսնացած* դաշտեր, *կործանող* շունչ:

Անձնավորում մակդիրներ. *Գայլի աչքերն էլ հառաչում էին: Հողն էլ էր այդ հառաչում... Ում աչքերն էին կայծակնաշողակ Մռնչում դեռ զոց աչքերի տեղակ: Որ մեղրաշրթունք շնչում էին: Առյուծն սպառախար, օձը պասպանձուն, Որ նենգ աչքերն էր բույնով կկոցում: Լուռ մռնչում էր աչքն էլ հովազի, Ինչպես ժանիքված աչքը վարազի:*

Կենդանիներին բնորոշող մակդիրներ. Վերը բերված անձնավորումները, ինչ խոսք, բնորոշում են կենդանիներին, սակայն բանաստեղծը, չբավականանալով դրանցով, կերտել է նաև այնպիսի բառ – մակդիրներ, որոնք թեև արտաքուստ թվում են լրացյալներին անհարիր, սակայն իրականում դառնում են այս կամ այն կենդանուն տրված առավել ճշգրիտ բնորոշումներ, ինչպես՝ *սպշահար առյուծ, պապանձուն օձ, ակնապիշ արծիվ, ցնծուն կապիկ, ահաշուք վամպիր, ահագնատեսիլ մամոնտ, ժանտ բորենի, տխրատեսիլ բու, սպշահար անգղ, մութ գետածի, անգութ բորենի, մթին մամոնտ* և այլն:

Սակայն **Աստված – սատանա - մարդ - կենդանիներ** հարաբերության և մանավանդ կնոջ ստեղծման նախանյութի և դրան համապատասխան՝ կնոջ էության շիրագյան ընկալումը մեկնաբանելու իմաստով, կարծում ենք, առավել բնորոշ է հետևյալ հատվածը, ուր իրոք միավորված ու համակցված են փոխաբերությունն ու մակդիրը, համեմատությունն ու անձնավորումը, չափազանցությունն ու հակադրությունը և այլն.

**Վերցրեց վագրի անգթությունը
Եվ նապաստակի վախկոտությունը,
Առավ կարապի գեղեցկությունը
Ու եղևիկինը, որ կինը միշտ վեհ
Իր մարմնաձևի կրքով էլ թովե,
Որ քավե մեղքը՝ կաքավե՝ թովե...
Կնոջ խոլական խորքով արթնացող
Խոլական խռովքն իր այրամարդու...
Առավ նագելի ու բարձր ու անձնյա
Եվ օձագալար հասակն էլ բարդու,
Որ կինը կրքի մագնիսը մնա
(Մարդն երկաթ, կինը՝ մագնիսը ոսկյա):
Տաք-տաք փաթաթվելն առավ բաղեղի,
Արգանդանյութն էլ առավ մայր հողի
Ու ցավն երկունքի ... Ու ձեռքն երկարեց,
Գրախտի հողից մի բուռ վերցրեց,
Իջավ դժոխքի տիղմից էլ բերեց,
Գեպի ժպտացող սատանան դառավ՝
Առավ սատանի սրտից էլ մի բուռ,
Իր աստվածային սրտից էլ առավ...
Եվ այսպես քամեց
Ողջ նախանյութը հոծ տիեզերքի:
Եվ այս ամենով կնոջը զարմեց՝
Ժխորեց շաղախն իր հուսկ հրաշքի,
Այս նուրբ քառսով կնոջը երկնեց՝
Քամելով նրան ողջ տիեզերքից, -
(Ի՛նչ կին, տիեզերքն ասես նա կրկնեց
Մի բուռ կնոջով...) (55):**

Գունային մակդիրներ. Հովհ. Շիրազի այս պոեմում քիչ են գունային մակդիրները՝ *թիլ մշուշ, կարմիր կավ, կապույտակ հեռու, ճերմակ ծաղկունք, կապույտ տաճար, ճերմակ կավ, ճերմակ ողնաշար, սև թույն, սև կրակ, սև կաթ, սև ժանգ*:

Նրբաբանություններ. «Աստծո գլուխգործոցը» պոեմում հանդիպում են նաև հակառակ իմաստ արտահայտող կամ հականիշների զուգադրությամբ կազմված նրբաբանական (օքսիմորոն) մակդիրներ, որոնք ավելի տպավորիչ են դարձնում պատկերը: «Նրբաբանություն է առաջանում, - գրել է Պ. Պողոսյանը,- երբ իմաստով միմյանց ժխտող բառ - հասկացություններն ընտրվում են այնպես, որ դրանց զուգորդումով արտահայտվի իմաստալից գաղափար»⁴: Հովի. Շիրազի պոեմում նկատել ենք այդպիսի սակավաթիվ օրինակներ՝ **քնքուշ տանջանք, նուրբ քառս, անմեռ տանջանք, լուսավոր քառս, անպարասիսան հարց, սուրբ մրմունջ, համբերանք – ջանք, չար ծարավանք**:

Համեմատություններ. Հայ բանաստեղծության մեջ համեմատություններ կերտող խոշորագույն վարպետներից է Հ. Շիրազը: Այս պոեմում էլ պատկերավորման կարևորագույն միջոցը համեմատությունն է, որը՝ որպես ստեղծագործական հզոր երևակայության դրսևորում, իր տարատեսակներով առատորեն սփռված է նրա տողերում: Երբեք պատկերը չէր դառնա այնքան տեսանելի ու շոշափելի, տարողունակ ու ընդգրկուն, եթե չլինեին շիրազյան չափազանցություններով համեմված արտասովոր համեմատությունները: Ինչի՞ց պետք է կնոջն ստեղծեր ամենակարող Աստված, եթե մարդուն երկնելիս արդեն սպառել էր ամբողջ շաղախ - նախանյութը.

**Ու գտավ կախարդն ամենակարող.
Չեռքը վիթխարի մի բրուտի պես
Խրեց արևի սիրտը հրակեզ
Եվ ապա խրեց հողի սիրտը մեծ.
Կնոջն՝ անհագուրդ գգվանքի համար՝
Հող ու արևի կիրքը վերցրեց,
Ամենաստեղծ կիրքն ամենամայր...
Ահա թե ինչու մեր կիրքն ու սերը սուրբ են,
Թեկուզև մեր սիրտը քամեն (55):**

Արտասովոր համեմատության շնորհիվ կարծես առարկայորեն տեսանելի է դառնում կինը իր նախասկզբով, բնավորությամբ ու էությամբ:

Լ. Եզեկյանը, կարևորելով համեմատությունների դերը ոճական արտահայտչամիջոցների մեջ, նկատում է նրան բնորոշ մի հետաքրքիր իրողություն. «Համեմատությունը կարող է կառուցվել մեկ կամ մեկից ավելի հատկանիշների վրա, որոնք հաճախ լինում են ակնհայտ, տվյալ առարկային բնորոշ մշտական հատկանիշ, երբեմն էլ նույնիսկ անսպասելի, ոչ հիմնական, որ տվյալ դեպքում վեր է ածվում հիմնական հատկանիշի»⁵:

Հ. Շիրազի ստեղծագործություններում, նաև այս պոեմում առատ են այդ կարգի համեմատությունները, որոնց մեջ համեմատվողի և համեմատելիի ընդհանուր հատկանիշների նկատմամբ հեղինակային վերաբերմունքն է արտահայտված: Այդ համեմատությունները նույնպես անխառն չեն. դրանք հանդես են գալիս պատկերավորման ուրիշ միջոցների հետ միահյուսված: Այսպես՝

**1. Սուրբ ու աննահանջ՝ արևի նման,
Որ թե մեռնում է՝ մեռնում է միայն
Ինչպես ցորենը՝ ի սեր նոր ծագման (55):**

⁴ Պ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 77:

⁵ Լ. Կ. Եզեկյան, նշվ. աշխ., էջ 341:

**2. Ու խոլ խարխափեց մարդը տակավին,
Ինչպես կույր հավքը՝ հողմերի թևին (62):**

Շիրագյան համեմատությունները միատարր չեն. երբեմն դրանք պարզ են՝ կառուցված համեմատվող առարկաների կամ երևույթների մեկ ընդհանուր հատկանիշի վրա, ինչպես բերված օրինակներում, երբեմն ծավալուն են ու բազմաճյուղ՝ հիմնված երկու և ավելի տարբեր հատկանիշների զուգորդման վրա, ինչպես՝

**Այնքան թափանցիկ, որ կրծքի տակից
Համբուրել ուզող բերանի նման
Կնոջ սրտիկը երևաց մեկից՝
Թրթռաց կրքից, երևաց վառման
Մարմնի մարմարից վարդով բուրելով՝
Սրտիկը՝ սիրտը՝ կրքի մի օվկիան...(58):**

Հ. Շիրագի այս պոեմը թեև գրվել է 1946 թ., սակայն առաջին անգամ տպագրվել է 1964-ին նրա «Զնար Հայաստանի» երկրորդ գրքում՝ «Բնության գլուխգործոցը» խորագրով: Հենց այդ հրատարակությունից էլ հեղինակային նորակազմությունների մի զգալի մասը գրեթե նույնությամբ տեղ է գտել ՀԽՍՀ ԳԱ Հր. Աճառյանի անվան լեզվաբանության ինստիտուտի և Էդ. Աղայանի կազմած հանրահայտ բացատրական բառարաններում: Ընդ որում, առաջին բառարանում նշված է այդ նորակազմությունների և հազվադեպ բառերի՝ Հ. Շիրագի գրչին պատկանելը: Սակայն դրանք, ուրիշ բառական միջավայրում դժվար գործածելի լինելով, ամբողջությամբ չեն դարձել հաճախակի գործածվող բառեր, բոլորը կենսունակ չեն ու չեն անցել գործուն բառապաշար, և մի մասը մնում է դիպվածային բառերի ոլորտում:

Հ. Շիրագի «Աստծո գլուխգործոցը» պոեմի լեզվաոճական քննությունը բերում է այն համոզման, որ հեղինակը կիրառել է ոչ միայն հայերենի բառազանձը հարստացնող բազմաթիվ նորաստեղծ բառեր ու անհատական մակդիրներ, այլև պատկերավորման միջոցների, ոճական բազմաձև հնարանքների ուրույն ու ամբողջական համակարգ:

Н. А. ТИРАБЯН — Образная система поэмы О. Шираза “Шедевр Бога”. — Богатство и сила воздействия образной системы О. Шираза обусловлены, в частности, разнообразием, гибкостью поэтического словаря, новаторским словообразованием. С этой точки зрения рассматриваются в статье преобладающие в поэме эпитеты и сравнения, особое внимание обращается на индивидуальные новообразования.